# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
# ՍԱՐՉԱՊԵՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

գ. Սարչապետ, Հեռ. 0 254 6 02 17, 0 254 6 02 18

N 208 -11
*16 դեկտեմբեր 2011թ.*

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ՊՐ-Ն Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

*Կից ներկայացնում եմ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարչապետ համայնքի ղեկավարի 12.12.2011թ. թիվ 31-Ն, 12.12.2011թ. թիվ 32-Ն որոշումների, համայնքի ավագանու 12.12.2011թ. թիվ 28-Ն, 12.12.2011թ. թիվ 29-Ա, 12.12.2011թ. թիվ 30-Ն, 12.12.2011թ. թիվ 31-Ն, 12.12.2011թ. թիվ 32-Ա, 12.12.2011թ. 33-Ա, 12.12.2011թ. թիվ 34-Ա, 12.12.2011թ. թիվ 35-Ա որոշումների մեկական օրինակները:*

Համայնքի ղեկավար՝ ԲՈՐԻՍ ԲԱՐՈՅԱՆ

Կատ. Աննա Բարոյան
0 254 6 02 17, 0 254 6 02 18

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԼՈՌՈՒ ՄԱՐԶ**
ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
**ՈՐՈՇՈՒՄ N 28-Ն**

---

12/12/2011

ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 19-Ի ԹԻՎ 18-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետով և <Իրավական ակտերի մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ կետով.

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Սարչապետ համայնքի ավագանու 2011 թվականի օգոստոսի 19-ի թիվ 18-Ն որոշմամբ հաստատված Սարչապետ համայնքի 2011 թվականի բյուջեում կատարել.

ա) փոփոխություններ ծախսային մասում
նախահաշիվ՝

| | | | |
|---|---|---|---|
| | *Կառավարման ապարատ* | | |
| 4231 տող | Վարչական ծառայություններ | նախատեսված՝ 100.0 | փոփոխված՝ 0 |
| 4215 տող | Ապահովագրական ծախսեր | 25.0 | 0 |
| | *Նախադպրոցական հիմնարկ* | | |
| 4269 տող | Հատուկ նպատակային այլ նյութեր | 500.0 | 0 |
| | *Սպորտ* | | |
| 4269 տող | Հատուկ նպատակային այլ նյութեր | 300.0 | 82.0 |
| | *Փողոցների լուսավորում* | | |
| 4251 տող | Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում | 2167.6 | 1867.6 |
| | *Ընտանիքի անդամներ և զավակներ* | | |
| 4729 տող | Այլ նպաստներ բյուջեից | 500.0 | 700.0 |
| | *Սոցիալ հատուկ արտոնություններ /այլ դասերին չպատկանող/* | | |
| 4729 տող | Այլ նպաստներ բյուջեից | 1000.0 | 800.0 |

բ) փոփոխություն մուտքային մասում՝

1112 տող Հողի հարկ համայնքների վարչական տարածքում գտնվող հողի համար նախատեսված՝ 4693.6 փոփոխված՝ 3550.6

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲԱՐՈՅԱՆ ԱՐՓԻԱՐ

2. ԴԱՎԹՅԱՆ ՀԱՄԼԵՏ

3. ՄԱՐԴՈՅԱՆ ՆՈՐԻԿ

4. ՄԽՈՅԱՆ ՋԱՎԵՆ

Համայնքի ղեկավար՝ ԲՈՐԻՍ ԲԱՐՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
**ՈՐՈՇՈՒՄ N 29-Ա**

12/12/2011

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԻ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԻ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԻ ԵՎ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ, 26-րդ կետերով և <Իրավական ակտերի մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածով.

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Սարչապետ համայնքի ղեկավարի 2012թ. ամսական վարձատրության չափը՝ համաձայն հավելվածի:
2. Հաստատել Սարչապետ համայնքի ղեկավարի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնական դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 2012թ. հունվարի 1-ից:
4. Ուժը կորցրած ճանաչել Սարչապետ համայնքի ավագանու 2011թ. հունվարի 14-ի <Սարչապետ համայնքի ղեկավարի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակի, հաստիքացուցակի և պաշտոնական դրույքաչափերի հաստատման մասին> թիվ 1-Ա որոշումը:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲԱՐՈՅԱՆ ԱՐՓԻԱՐ
2. ԴԱՎԹՅԱՆ ՀԱՄԼԵՏ
3. ՄԱՐԴՈՅԱՆ ՆՈՐԻԿ
4. ՄԽՈՅԱՆ ԶԱՎԵՆ

Համայնքի ղեկավար ԲՈՐԻՍ ԲԱՐՈՅԱՆ

Հավելված
ՀՀ Լոռու մարզի Սարչապետ
համայնքի ավագանու
2011թ. դեկտեմբերի 12-ի թիվ 29-Ա
որոշման

## Սարչապետ գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 10
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

| Հաստիքի անվանումը | Հաստիքային միավորը /դրույք/ | Ամսեկան պաշտոնային դրույքաչափը /ՀՀ դրամ/ |
|---|---|---|
| *Համայնքի ղեկավար* | 1 | 150 000 |
| *Համայնքի ղեկավարի տեղակալ* | 1 | 80 000 |
| *Համայնքի ղեկավարի օգնական* | 1 | 70 000 |
| *Աշխատակազմի քարտուղար* | 1 | 110 000 |
| *Գլխավոր մասնագետ* | 1 | 100 000 |
| *Առաջատար մասնագետ* | 1 | 90 000 |
| *1-ին կարգի մասնագետ* | 2 | 80 000 |
| Տեխ. սպասարկման անձնակազմ | | |
| *Վարորդ* | 1 | 55 000 |
| *Հավաքարար* | 1 | 45 000 |

Սարչապետ համայնքի ղեկավար
աշխատակազմի քարտուղար՝ Ա. Բարոյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՄԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 դեկտեմբերի 2011 թ. N 30 -Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԱՐՉԱՊԵՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18 կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ և 10-րդ հոդվածներով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասով՝

Մարչապետ գյուղական համայնքի ավագանին որոշում է՝

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մարչապետ գյուղական համայնքում 2012թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումը օրենքով սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն պետական իրավական փորձաքննություն անցկացնելու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

| Համայնքի ավագանու անդամներ | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Զավեն Մխոյան | [signature] | | |
| Արփիար Բարոյան | [signature] | | |
| Նորիկ Մարդոյան | [signature] | | |
| Համլետ Դավթյան | [signature] | | |

Համայնքի ղեկավար՝ [signature] Բ. ԲԱՐՈՅԱՆ

2011թ. դեկտեմբերի 12
գ. Մարչապետ

Հավելված
Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Սարչապետ գյուղական համայնքի ավագանու
2011 թվականի դեկտեմբերի 12-ի թիվ 30-Ն որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐՉԱՊԵՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝

1) հիմնական օբյեկտների համար՝

ա. մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող և հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ չորս հազար հինգ հարյուր դրամ

2) սույն հավելվածի 1-ին կետի 1-ին ենթակետի «ա» պարբերությամբ չնախատեսված օբյեկտների համար՝

ա. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ ինը հազար դրամ

բ. 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ տասնհինգ հազար դրամ

գ. 1001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ քսանմեկ հազար դրամ

3) ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

ա. մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ ինը հարյուր դրամ

բ. 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ հազար հինգ հարյուր դրամ

2. Համայնքի վարչական տարածքում տեղական տուրքը սահմանել՝ շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների ( այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ ինը հարյուր դրամ

2) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի 1-ին ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

3) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝ հազար հինգ հարյուր դրամ

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանել՝

1) ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում, յուրաքանչյուր եռամսյակի համար՝ յոթ հազար հինգ հարյուր դրամ

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում, յուրաքանչյուր եռամսյակի համար՝ երեք հազար դրամ

5. Համայնքի տարածքում՝

1) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝ յուրաքանչյուր օրվա համար՝ երեք հարյուր հիսուն դրամ

2) հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝ հարյուր հիսուն հազար դրամ

6. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝ երկու հազար դրամ

7. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝ տասը հազար դրամ

8. Համայնքի տարածքում տեղական ինքնակառավարման մարմնի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից տեղական վճարը սահմանել՝ հազար դրամ:

Մարչապետ համայնքի ղեկավարի
աշխատակազմի քարտուղար՝ Ա. ԲԱՐՈՅԱՆ

12 դեկտեմբերի 2011թ.

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
## ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
## ՈՐՈՇՈՒՄ N 31-Ն

12/12/2011

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐՉԱՊԵՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետով.

### ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Սարչապետ գյուղական համայնքի 2012թ. բյուջեն.

եկամուտների գծով՝ 37 003 300 /երեսուն յոթ միլիոն երեք հազար երեք հարյուր/ ՀՀ դրամ
ծախսերի գծով՝ 37 003 300 /երեսուն յոթ միլիոն երեք հազար երեք հարյուր/ ՀՀ դրամ

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲԱՐՈՅԱՆ ԱՐՓԻԱՐ
2. ԴԱՎԹՅԱՆ ՀԱՄԼԵՏ
3. ՄԱՐԴՈՅԱՆ ՆՈՐԻԿ
4. ՄԽՈՅԱՆ ՋԱՎԵՆ

Համայնքի ղեկավար՝ ԲՈՐԻՍ ԲԱՐՈՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
## ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
## ՈՐՈՇՈՒՄ N 32-Ա

12/12/2011

ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով.

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարին լրացուցիչ վարձատրություն տրամադրելու համար՝ մեկ ամսվա աշխատավարձի չափով:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲԱՐՈՅԱՆ ԱՐՓԻԱՐ
2. ԴԱՎԹՅԱՆ ՀԱՄԼԵՏ
3. ՄԱՐԴՈՅԱՆ ՆՈՐԻԿ
4. ՄԽՈՅԱՆ ՋԱՎԵՆ

Համայնքի ղեկավար՝ ԲՈՐԻՍ ԲԱՐՈՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԼՈՌՈՒ ՄԱՐԶ**
ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N 33-Ա

12/12/2011

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿՉԻՆ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ՏՈՒՅԺԻՑ
ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և <Գույքահարկի մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ, 4-րդ կետերով.

**ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝**

Սարչապետ համայնքի բնակչուհի Անուշ Ավդալյանին ազատել իրեն պատկանող Գազ 2410 մակնիշի, 41 ss 526 պետհամարանիշը կրող ավտոմեքենայի գույքահարկը չվճարելու հետևանքով առաջացած 38 500 ՀՀ դրամ տույժից՝ հաշվի առնելով, որ Անուշ Ավդալյանը գտնվում է ֆինանսապես ծանր կացության մեջ:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲԱՐՈՅԱՆ ԱՐՓԻԱՐ
2. ԴԱՎԹՅԱՆ ՀԱՄԼԵՏ
3. ՄԱՐԴՈՅԱՆ ՆՈՐԻԿ
4. ՄԽՈՅԱՆ ՋԱՎԵՆ

Համայնքի ղեկավար՝ ԲՈՐԻՍ ԲԱՐՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

# ՈՐՈՇՈՒՄ N 34-Ա

12/12/2011

## ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով.

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Սարչապետ համայնքի բյուջեի 09.4.1 <Բարձրագույն մասնագիտական կրթություն /ուսման վարձ/> ծրագրի 4729 հոդվածից որպես 2011թ. 2-րդ ուս. տարվա ուսման վարձ <Գյումրիի պետական մանկավարժական ինստիտուտ> ՊՈԱԿ-ին փոխանցել 100 000 /հարյուր հազար/ ՀՀ դրամ Է. Առաքելյանի, Երևանի Մովսես Խորենացու անվան համալսարանին՝ 90 000 /իննսուն հազար/ ՀՀ դրամ Ե. Մարգարյանի, Վանաձորի <Մխիթար Գոշ> հայ-ռուս. միջազգային համալսարանին՝ 80 000 /ութսուն հազար/ ՀՀ դրամ Ա. Բարոյանի և 80 000 /ութսուն հազար/ ՀՀ դրամ Բ. Բարոյանի համար:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲԱՐՈՅԱՆ ԱՐՓԻԱՐ
2. ԴԱՎԹՅԱՆ ՀԱՄԼԵՏ
3. ՄԱՐԴՈՅԱՆ ՆՈՐԻԿ
4. ՄԽՈՅԱՆ ԶԱՎԵՆ

Համայնքի ղեկավար ԲՈՐԻՍ ԲԱՐՈՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
## ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
# ՈՐՈՇՈՒՄ N 35-Ա

12/12/2011

## ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՐԱՊԱՐԱԿԻ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով.

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Տալ համաձայնություն Սարչապետ համայնքի հրապարակի բարեկարգման աշխատանքները իրականացնելու համար:
2. Նշված աշխատանքները իրականացնելու նպատակով շինանյութ ձեռք բերելու համար Սարչապետ համայնքի բյուջեի 01.6.1 <Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ> ծրագրի 4269 հոդվածից տրամադրել 358 000 /երեք հարյուր հիսուն ութ հազար/ ՀՀ դրամ:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲԱՐՈՅԱՆ ԱՐՓԻԱՐ
2. ԴԱՎԹՅԱՆ ՀԱՄԼԵՏ
3. ՄԱՐԴՈՅԱՆ ՆՈՐԻԿ
4. ՄԽՈՅԱՆ ՋԱՖԵՐ

Համայնքի ղեկավար ԲՈՐԻՍ ԲԱՐՈՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
## ՍԱՐՉԱՊԵՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 31-Ն

---

գ. Սարչապետ, Հեռ. 0 254 6 02 17, 0 254 6 02 18

*12 դեկտեմբեր 2011թ.*

### ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԻ, ՆԱԽԱՀԱՇԻՎՆԵՐԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ԲԱՇԽՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն <Բյուջետային համակարգի մասին> ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի և առաջնորդվելով Սարչապետ համայնքի ավագանու 12 դեկտեմբերի 2011թ. <2011 թվականի բյուջեում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին> թիվ 28-Ն որոշմամբ.

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

Հաստատել Սարչապետ համայնքի 2011 թվականի բյուջեի եկամուտների և ծախսերի եռամսյակային բաշխումը /հավելված 1, 2/:

Համայնքի ղեկավար՝ ԲՈՐԻՍ ԲԱՐՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՍԱՐՉԱՊԵՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

# ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 32-Ն

գ. Սարչապետ, Հեռ. 0 254 6 02 17, 0 254 6 02 18

*12 դեկտեմբեր 2011թ.*

## ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԻ, ՆԱԽԱՀԱՇԻՎՆԵՐԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ԲԱՇԽՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն <Բյուջետային համակարգի մասին> ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի և առաջնորդվելով Սարչապետ համայնքի ավագանու 12 դեկտեմբերի 2011թ. <Սարչապետ համայնքի 2012 թվականի բյուջեն հաստատելու մասին> թիվ 31-Ն որոշմամբ.

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

Հաստատել Սարչապետ համայնքի 2012 թվականի բյուջեի եկամուտների և ծախսերի եռամսյակային բաշխումը /հավելված 1, 2/:

Համայնքի ղեկավար՝ ԲՈՐԻՍ ԲԱՐՈՅԱՆ